Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի

ք. Երևան 11 օգոստոս 2022թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 17-րդ կետը, կայացել է՝ Կառավարման խորհրդի հերթական նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Հովհաննես Հարությունյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Շահեն Խաչատրյան	Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ

Բացակայում են՝

Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կառավարման խորհրդի անդամներ Արման Պողոսյանը և Բարդուխ Գաբրիելյանը տեղեկացրել են, որ Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու պատճառով չեն կարող մասնակցել կառավարման խորհրդի հերթական նիստին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների կատարողականի գնահատումները հաստատելու և հաշվետվություններին հավանություն տալու վերաբերյալ վերաբերյալ:

   (Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ.Նահապետյան)

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու և հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ:

   (Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ.Նահապետյան)

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն հավանություն տալու վերաբերյալ:

   (Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն հավանություն տալու վերաբերյալ:

   (Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտին հավանություն տալու մասին:

   (Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

6. Այլ հարցեր:

   (Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների կատարողականի գնահատումները և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններին:

Կողմ 8, Դեմ 0

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությանը:

Կողմ 8, Դեմ 0

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

Կողմ 8, Դեմ 0

4. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելուն:

Կողմ 8, Դեմ 0

5. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտին:

Կողմ 8, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Արթուր Ասոյանի կողմից առաջարկվեց օրակարգի ***3-րդ, 4-րդ և 5-րդ*** հարցերը քննարկել նիստի սկզբում, հաշվի առնելով՝ դրանց քննարկման ավելի կարճ տևողությունը, որը խորհրդի կողմից ընդունվեց միաձայն:

Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանի կողմից ներկայացվեց օրակարգի ***3-րդ*** հարցի վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես. ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 568-Ա որոշման 1-ին մասի 1-ին կետով. «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» N 706-Ա որոշման N 2 հավելվածի 6-11-րդ կետերում՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի առավելագույն հաստիքների թիվը «195» փոխարինել «194» թվով՝ կրճատելով ղեկավարի օգնականի 1 հաստիք: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պաշտոնների անվանացանկում կատարել փոփոխություն և նախատեսել ևս մեկ տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատուի հաստիք, ինչն էլ հնարավորություն կտա արդյունավետորեն ապահովել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ավտոմեքենաների, դրանց վառելիքի, տնտեսական միջոցների հաշվառման բաշխման և այլ նմանատիպ գործընթացների իրականացումը: Նշված փոփոխության հիման վրա անհրաժեշտ է կրճատել գործող երկու «Հավաքարար»-ի հաստիքներից մեկը, քանի որ Երևան քաղաքի Կորյուն 15-17-19 հասցեում տեղակայված վարչական շենքի մաքրման համար բավական է մեկ հաստիքը: Տեսչական մարմնի ղեկավարը փաստեց, որ Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Օրակարգի ***3-րդ*** հարցի վերաբերյալ Արթուր Ասոյանը ներկայացրեց հետևյալ դիտարկումը.

Բյուջետային գործընթացի պատասխանատուի ևս մեկ հաստիքի ավելացման դեպքում պետք է նկատի ունենալ, որ հավաքարարի և բյուջետային գործընթացի պատասխանատուի աշխատավարձերի միջև նկատելի տարբերություն կա, ինչը հետագայում կարող է խնդիր առաջացնել, ինչին ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ներկայացրեց, որ Տեսչական մարմնում հաստիքների համալրման գործընթացի դինամիկայից կարող ենք ենթադրել, որ մոտակա ժամանակահատվածում հետևյալ խնդրի վերաբերյալ բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվի,իսկ մյուս տարիների բյուջետային հայտերում արդեն այն ներառված կլինի:

Արթուր Ասոյանն առաջարկեց հետևյալ հարցի հիմնավորման մեջ կատարել փոփոխություն, հաշվի առնելով, որ Տեսչական մարմինները չունեն ֆինանսաբյուջետային և գնումների կազմակերպման առանձին ստորաբաժանումներ, ուստի անհրաժեշտություն է առաջացել ավելացնել բյուջետային գործընթացի պատասխանատուի ևս մեկ հաստիք, ով կզբաղվի միջնաժամկետ ծախսային ծրագրերի, բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և գնումների գործընթացի կազմակերպման աշխատանքներով: Ի հավելումն Արթուր Ասոյանի դիտարկման, արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանն նշեց, որ առարկություններ չունի և համաձայն է Արթուր Ասոյանի այն պնդմանը, որ հիմնավորման մեջ պետք է ներառվեն բյուջետային գործընթացի պատասխանատուի համար նախատեսված բոլոր գործառույթները:

Օրակարգի ***4-րդ*** հարցի վերաբերյալ Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ներկայացրեց Տեսչական մարմնի կողմից չօգտագործված միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելու մասին հիմնավորումները, ըստ որի էներգետիկ ծախսերի հետ կապված չծախսված միջոցները պետք է տեղափոխել չորրորդ եռամսյակ՝ հետագայում բյուջեի կատարողականի խնդիրներ չառաջացնելու նպատակով:

Օրակարգի ***4-րդ*** հարցի վերաբերյալ Արթուր Ասոյանը առաջարկեց հարցին հավանություն տալուց առաջ որոշման նախագծում վերնագիրը ձևակերպել հետևյալ կերպ. «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղման նպատակով բյուջեում վերաբաշխում նախաձեռնելը թույլատրելու մասին» Հայաստանի

Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծը հաստատելու մասին»:

Օրակարգի ***5-րդ*** հարցի վերաբերյալ Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ներկայացրեց Տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտը և դրանում կատարված փոփոխությունները:

Արթուր Ասոյանը բարձրաձայնեց փորձաքննություն իրականացնելու հետ կապված ծախսերի խնդիրը, ինչին ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավարը հավելեց, որ այն ներառվել է 2023 թվականի բյուջետային հայտում, որը հետագայում կօգնի պատկերացում կազմել՝ մեկ տարվա ընթացքում որքան գումար է հարկավոր փորձաքննական աշխատանքները կազմակերպելու նպատակով և կհեշտացնի բյուջեում վերաբաշխում կատարելու գործընթացը:

Օրակարգի ***6-րդ*** հարցի վերաբերյալ Տեսչական մարմնի ղեկավարը ներկայացրեց վառելիքի ծախսի մասին տեղեկատվությունը, մասնավորապես վառելիքի գնի բարձրացմամբ պայմանավորված 2021 թվականն 21,8 մլն դրամի դիմաց ձեռք է բերվել 58 100 լիտր բենզին, իսկ 2022 թվականին 20,5 մլն դրամի դիմած ձեռք է բերվել 43 820 լիտր բենզին, որը անհնարին է դարձրել Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների իրականացումը: Կառավարման խորհուրդը որոշեց հետևյալ հարցը քննարկելու նպատակով հրավիրել Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Օրակարգի ***1-ին*** և ***2-րդ*** հարցերը ներկայացվեցին Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Բագրատ Նահապետյանի կողմից, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանն առաջարկեց ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն, հավանություն տալ որակի ապահովման վարչության կողմից ներկայացված հաշվետվություններին և հանձնարարել Տեսչական մարմնին վերլուծել որակի ապահովման վարչության կողմից ներկայացված հաշվետվություններում առկա բոլոր խնդիրներն ու թերությունները և խորհրդին ներկայացնել պարզաբանումներ այն կետերի վերաբերյալ, որտեղ արձանագրվել են խնդիրներ և ինչ միջոցներ են ձեռնարկվել դրանց կատարման ուղղությամբ: Հաշվի առնելով նաև նյութերի ծավալուն լինելու հանգամանքը՝ Կառավարման խորհուրդը որոշեց հավանություն տալ որակի ապահովման վարչության կողմից ներկայացված հաշվետվություններին և հիմք ընդունելով

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի 3րդ ենթակետը՝ հանձնարարել Տեսչական մարմնին մինչև սույն թվականի հոկտեմբերի 30-ը ուսումնասիրել և խորհրդի անդամներին ներկայացնել հաշվետվություններում բարձրացված հարցերի պարզաբանումները, ներկայացված խնդիրների և թերությունների վերացման նպատակով ձեռնարկված միջոցները, իսկ խորհրդի նիստի ժամանակ այն ներկայացնել նաև շնորհանդեսի տեսքով:

Արթուր Ասոյանը նշեց, որ որակի ապահովման վարչության կողմից վերհանված ընթացիկ խնդիրները բազմիցս քննարկվում են Տեսչական մարմնի ղեկավարության հետ՝ վարչարարության, ստուգումների գործընթացները լավարկելու, օրենսդրական խնդիրները դուրս բերելու և դրանց համապատասխան լուծումներ տալու համար: Արթուր Ասոյանը ներկայացրեց, որ որակի ապահովման վարչության կողմից վերջերս արձանագրված ենթադրելի խախտումներից մեկի դեպքով Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ուղղված գրության համաձայն՝ Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով անցկացվել է ծառայողական քննություն, որով պարզվել է, որ տեսուչների կողմից իրականացված գործողություններն իրավաչափ են: Արթուր Ասոյանը նշեց, որ իր կարծիքով ծառայողական քննության արդյունքներն այնքան էլ միանշանակ չեն, իրավական մեկնաբանման տեղիք են տալիս և առաջարկեց այս դեպքն ընդունել որպես տիպային օրինակ, ծառայողական քննությանը և դրա արդյունքներին վերաբերող նյութերի ամբողջական փաթեթը և դրա արդյունքում իրականացված վերլուծությունը տրամադրել խորհրդի անդամներին, որի արդյունքում խորհրդի անդամները կարող են իրենց տեսակետն արտահայտել որակի ապահովման վարչության կողմից արձանագրված խնդրի, ծառայողական քննության արդյունքների և Տեսչական մարմնի ձեռնարկած միջոցների իրավաչափության վերաբերյալ: Ասոյանը նշեց, որպես խորհրդի անդամ Արդարադատության նախարարության ներկայացուցչի դիրքորոշման կարևորությունը: Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը հավելեց, որ ծառայողական քննության վերաբերյալ տեղեկատվությունն արդեն իսկ ներառված է 2022 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունում և աշխատանքային նման քննարկումների արդյունքում ներկայումս փոփոխություններ են կատարվում ներքին գործավարության կարգում, որը կօգնի տեսուչներին ավելի արդյունավետ

լուծումներ տալ նման խնդիրներին: Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Բագրատ Նահապետյանը նշեց, որ եռամսյակների ընթացքում արձանագրված խախումների հիմքում հիմնականում ընկած են տեսուչների կողմից օրենսդրական կարգավորումներին չտիրապետելը, դրանց սխալ ընկալումը և օրենսդրական բացերը: Արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանն առաջարկեց քննարկել նման դեպքերում ուղեցույցների կիրառումը, ինչին ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավարը նշեց, որ ուղեցույցների մշակման գործընթացն արդեն մեկնարկել է և առաջիկա նիստերի ընթացքում այն ևս կներկայացվի խորհրդի հավանությանը: Տեսչական մարմնի ղեկավարի կարծիքով որակի ապահովման վարչության կողմից բացահայտված թերությունները և խնդիրները վերլուծելու գործընթացը նաև լավ հնարավորություն է լավարկելու որակի ապահովման վարչության աշխատանքները:

Արթուր Ասոյանը հավելեց, որ որակի ապահովման վարչության կողմից բարձրացված խնդիրները ըստ նշանակության պետք է ստանան համապատասխան ընթացք, այդ թվում իրավական, ինչպես նաև խնդիրներին պատշաճ լուծում տալու համար ըստ անհրաժեշտության մշակվեն անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ, ինչին ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավարը նշեց, որ տեղեկատվության վերլուծության արդյունքում քրեորեն պատժելի խախտում հայտնաբերելու դեպքում Տեսչական մարմինն իր իրավասությունների շրջանակներում դրանք կներկայացնի իրավապահ համապատասխան մարմիններ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

(խորհրդի նախագահ) _____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ

(խորհրդի քարտուղար) _____ Վ. Բարսեղյան